

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Նկարում Գ տառով նշված է.

- 1) միջնապատյանը
- 2) նստվածքային շերտը
- 3) բազալտային շերտը
- 4) գրանիտային շերտը



2 Որքա՞ն է հարավարևմտյան կողմի ազիմուտը.

- 1) 270°
- 2) 135°
- 3) 225°
- 4) 45°

3 Արշավախումբը հս. լ. 6°, արմ. ե. 66° կոորդինատից շարժվեց հարավ՝ օրական անցնելով 33,3 կմ ճանապարհ: Արշավախմբի գտնվելու վայրի աշխարհագրական կոորդինատները 45 օր անց կլինեն.

- 1) հվ. լ. 7,5°, արմ. ե. 66°
- 2) հս. լ. 19,5°, արմ. ե. 66°
- 3) հվ. լ. 6,5°, արմ. ե. 66°
- 4) հս. լ. 4,5°, արմ. ե. 66°

4 Մարտի 21-ին առավելագույն ջերմություն ստանում են.

- 1) հյուսիսային կիսագնդի արևադարձային լայնությունները
- 2) հասարակածային լայնությունները
- 3) հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնությունները
- 4) հարավային կիսագնդի արևադարձային լայնությունները

5 Մթնոլորտի ազդեցությամբ չեն առաջանում.

- 1) քամիները
- 2) ծովային հոսանքները
- 3) մթնոլորտային տեղումները
- 4) տարվա եղանակները

6 Ո՞ր պնդումն է ճիշտ.

Երկրի ներքին ուժերի հետ են կապված.

- 1) երկրաշարժի և ցունամիի առաջացումը
- 2) տորնադոյի և ցիկլոնի առաջացումը
- 3) ցունամիի և ցիկլոնի առաջացումը
- 4) երկրաշարժի և տորնադոյի առաջացումը

7 Մշտապես միևնույն ուղղությամբ փչող քամիներ են.


- 1) մուսսոնները և պասսատները
- 2) բրիզները և պասսատները
- 3) պասսատները և արևմտյան քամիները
- 4) արևմտյան քամիները և մուսսոնները

8 Գետի անկումը 1764 մ է, երկարությունը՝ 196 կմ: Գետի թեքությունը կլինի.

- 1) 9 մ/կմ
- 2) 12 մ/կմ
- 3) 8 մ/կմ
- 4) 0,1 մ/կմ

9 Նկարում Ե տառով նշված է.


- 1) Հասարակածը
- 2) հարավային արևադարձը
- 3) հարավային բևեռային շրջագիծը
- 4) Հարավային բևեռը



10

«Քամիների վարդում» հորիզոնի n° ր կողմից է ամենից շատ փչել քամին.

- 1) հարավարևմտյան
- 2) հյուսիսարևելյան
- 3) հյուսիսարևմտյան
- 4) հարավարևելյան



11

«Հողատիպ – բնական զոնա» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) պոդզոլային – սավաննա
- 2) դարչնագույն – տունդրա
- 3) անտառային գորշ – լայնատերև անտառ
- 4) սևահող – փշատերև անտառ

12

«Օովածոց – օվկիանոս» գույգերից ընտրել սխալը.

- 1) Կալիֆոռնիական – Խաղաղ
- 2) Գվինեական – Ատլանտյան
- 3) Օմանի – Հնդկական
- 4) Բոտնիկական – Հյուսիսային սառուցյալ

13

Ω° ր կլիմայական գոտին է բաժանվում կլիմայական երեք մարզի՝ արևմտյան (միջերկրածովային), կենտրոնական (ցամաքային), արևելյան (մուսսոնային).

- 1) հասարակածային
- 2) մերձհասարակածային
- 3) մերձարևադարձային
- 4) մերձարկտիկական (մերձանտարկտիկական)

14

Ω° ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնեռներում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են մեծ անկյան տակ:
- 2) Հասարակածում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են փոքր անկյան տակ:
- 3) Ջերմային բարեխառն գոտիներն ընկած են արևադարձերի միջև:
- 4) Արեգակից ստացվող ջերմության քանակը կախված է վայրի աշխարհագրական լայնությունից և բացարձակ բարձրությունից:

15

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Քամու ուժը կախված է արագությունից:
- 2) Ցերեկային բրիզն առաջանում է ցերեկը ջրավազանի վրայի սառն ու ծանր օդի դեպի ցամաք շարժվելու հետևանքով:
- 3) Հյուսիսային կիսագնդում պասսատները փչում են հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք:
- 4) Եվրասիայի մերձարևադարձային և բարեխառն կլիմայական գոտիների արևելյան ծովափնյա շրջաններում ամռանը օվկիանոսից դեպի ցամաք են փչում խոնավ և տաք մուսսոնները:

16

«Գետ – հորդացման սեզոն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Նիգեր – ձմեռ
- 2) Տիգրիս – ձմեռ
- 3) Օրինոկո – ամառ
- 4) Յանգզի – գարուն

17

«Աշխարհամաս – կղզի» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ասիա – Կրետե
- 2) Աֆրիկա – Հրո երկիր
- 3) Եվրոպա – Իսլանդիա
- 4) Անտարկտիկա – Թասմանիա

18


«Գետ – օվկիանոս» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Կոլորադո – Խաղաղ
- 2) Շարի – Հնդկական
- 3) Մեկոնգ – Հնդկական
- 4) Դոն – Հյուսիսային սառուցյալ

19

Քարտեզում Ա տառով n° ը ծովն է նշված.

- 1) Սուլավեսի
- 2) Հարավչինական
- 3) Արևելաչինական
- 4) Ֆիլիպինյան



20

Քարտեզում Ը տառով n° ը մայրաքաղաքն է նշված.

- 1) Աշխաբադ
- 2) Աստանա
- 3) Բիշքեք
- 4) Տաշքենդ

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մորենային թմբերը գետի քայքայիչ աշխատանքի արդյունքում առաջացած մակերևույթի ձևերն են:
- 2) Հարթավայրերում մակերևույթի բնույթից կախված՝ շատ հստակ է արտահայտվում գետերի ջրբաժան գիծը:
- 3) Ի տարբերություն հարթավայրային գետերի՝ լեռնային գետերն ունեն փոքր թեքություն:
- 4) Գետի ծախսը հունի լայնակի կտրվածքով մեկ վայրկյանում անցած ջրի քանակն է:

22

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հարավային Ամերիկայի արևելյան ափերի մոտով անցնում է Բրազիլական տաք հոսանքը:
- 2) Հարավային Ամերիկայի արևմտյան ափերի մոտով անցնում է Պերուական սառը հոսանքը:
- 3) Հարավային Ամերիկայի հյուսիսային ափերի մոտով անցնում է Գվինեական տաք հոսանքը:
- 4) Հարավային Ամերիկայի հարավարևելյան ափերի մոտով անցնում է Ֆոլկլենդյան սառը հոսանքը:

23

Յ-րդ ժամային գոտին ընկած է.

- 1) արլ. ե. $37^{\circ} 30'$ -ի և արլ. ե. $52^{\circ} 30'$ -ի միջև
- 2) արմ. ե. $22^{\circ} 30'$ -ի և արմ. ե. $37^{\circ} 30'$ -ի միջև
- 3) արլ. ե. $7^{\circ} 30'$ -ի և արլ. ե. $22^{\circ} 30'$ -ի միջև
- 4) արլ. ե. $22^{\circ} 30'$ -ի և արլ. ե. $37^{\circ} 30'$ -ի միջև

24


Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բարձր է բնակչության բնական աճը:
- 2) Տարածաշրջանի մեջ են մտնում Արաբական և Հինդուստան թերակղզիները:
- 3) Այստեղ են առաջացել քրիստոնեություն և բուդդայականություն կրոնները:
- 4) Երկրների մեծ մասի բնակչության կազմում գերակշռում են կանայք:

25

Մեռատարիքային բուրգը բնորոշ է.

- 1) Ռուսաստանին
- 2) Մեծ Բրիտանիային
- 3) Թուրքիային
- 4) Ավստրալիային



26

Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներում բարձր բնական աճը պայմանավորված չէ.

- 1) կանանց տնտեսության մեջ ներգրավվածության ցածր աստիճանով
- 2) վաղ ամուսնություններով
- 3) գյուղական բնակչության գերակշռությամբ
- 4) կրթական բարձր մակարդակով

27

Հասարակության զարգացման մեջ քաղաքների դերի մեծացման պատմական գործընթացը, որն արտահայտվում է բնակչության ընդհանուր թվում քաղաքային բնակչության տեսակարար կշռի ավելացմամբ և քաղաքային ապրելակերպի տարածմամբ, կոչվում է.

- 1) դեպոպուլյացիա
- 2) ուրբանիզացիա
- 3) միգրացիա
- 4) ազլոմերացիա

28

Բնութագրումով որոշել պետությունը.

Հարավարևմտյան Ասիա տարածաշրջանի այս երկրի տնտեսության մասնագիտացման ճյուղերից է նավթի արդյունահանումը և փյունիկյան արմավի մշակումը: Երկիրն արևմուտքից սահմանակցում է Մաուրիտանիային, իսկ արևելքից՝ Իրանին: Ո՞րն է այդ երկիրը.

- 1) Օմանը
- 2) Իրաքը
- 3) Սիրիան
- 4) Լիբանանը

29

Որքա՞ն կկազմի երկրի բնակչության բացարձակ բնական աճը, եթե բնակչության թիվը 2780000 է, ծնելիությունը կազմում է 12 ‰, մահացությունը՝ 7 ‰.

- 1) 13900
- 2) 33360
- 3) 52820
- 4) 19460

30 **Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Ըստ պետական կարգի՝ բացարձակ միապետություն է:
- 2) Պարսիկներից հետո երկրի խոշոր ազգություններից են ադրբեջանցիներն ու քրդերը:
- 3) Թեհրանը, Սպահանը երկրի հայաշատ քաղաքներից են:
- 4) Ունի բնակչության բարձր բնական աճ:

31 **Դաշնային պետական կառուցվածք ունեն.**

- 1) Ռուսաստանը, Թուրքիան
- 2) Կանադան, Գերմանիան
- 3) Ֆրանսիան, ԱՄՆ-ը
- 4) Հնդկաստանը, Իրանը

32 **«Արտադրանք – արդյունաբերության ճյուղ» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) սինթետիկ մանրաթել – թեթև արդյունաբերություն
- 2) հաստոց – մետաղաձուլություն
- 3) պլաստմասսա – մեքենաշինություն
- 4) տրիկոտաժ – թեթև արդյունաբերություն

33 **«Ժողովրդագրական պայթյունը» բնորոշ է.**

- 1) ԱՄՆ-ին և Կանադային
- 2) Նիգերիային և Ռուանդային
- 3) Ռուսաստանին և Ուկրաինային
- 4) Ֆրանսիային և Գերմանիային

34 **«Նավահանգիստ – երկիր» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Փոթի – Ադրբեջան
- 2) Մարսել – Իսպանիա
- 3) Մումբայ – Հնդկաստան
- 4) Օդեսա – Ռուսաստան

35

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Վուշը հիմնական թելատու մշակաբույսն է և տարածված է արևադարձային գոտու երկրներում:
- 2) Շաքարի ճակնդեղի մշակության հիմնական շրջանները բարեխառն գոտում են:
- 3) Շաքարեղեգը ջերմասեր բույս է և հիմնականում տարածված է ջերմային տաք գոտում:
- 4) Միջերկրածովյան երկրները մասնագիտանում են ձիթապտղի մշակությամբ:

36

Չինաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Առաջատար է բամբակյա և մետաքսյա գործվածքների արտադրությամբ:
- 2) Կենտրոնական և արևմտյան մասերի կլիման խոնավ մերձարևադարձային-մուսսոնային է:
- 3) Հարուստ է արժեքավոր անտառներով:
- 4) Արևելյան շրջաններում գետերը քիչ են և սակավաջուր:

37

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Համաշխարհային թեթև արդյունաբերության մեջ բավականին մեծ է զարգացող երկրների մասնաբաժինը:
- 2) Թեթև արդյունաբերությունը սերտորեն կապված է գյուղատնտեսության հետ:
- 3) Թեթև արդյունաբերությունն աչքի է ընկնում աշխատատարությամբ:
- 4) Թեթև արդյունաբերությունը բացասական մեծ ներգործություն ունի շրջակա միջավայրի վրա:

38

«Մշակաբույս – առաջատար երկիր» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) թեյ – Նորվեգիա
- 2) սուրճ – Ֆրանսիա
- 3) բամբակենի – Կանադա
- 4) կակաո – Գանա

39

«Սահմանակից երկրներ – լեռներ» գույգորդումներից ընտրել ճիշտը.

- 1) Լեհաստան – Սլովակիա – Պիրենեյներ
- 2) Իտալիա – Ֆրանսիա – Կարպատներ
- 3) Հնդկաստան – Չինաստան – Տյան Շան
- 4) Չիլի – Արգենտինա – Անդեր

40 Ո՞ր երկու երկրները Հարավարևմտյան Ասիայում չեն.

- 1) Իսրայելը և Հորդանանը
- 2) Թուրքիան և Իրանը
- 3) Պակիստանը և Թուրքմենստանը
- 4) Սիրիան և Լիբանանը

41 Բնութագրումով որոշել երկիրը.

Բնակչության թվաքանակով երկիրն աշխարհում առաջին տասնյակում է: Բազմազգ պետություն է: Բնակչությանը բնորոշ է նեղացված վերարտադրության ռեժիմը: Բնակչության խտությունն արևմուտքից արևելք շարժվելիս նվազում է: Ո՞րն է այդ երկիրը.

- 1) Ուկրաինան
- 2) Պակիստանը
- 3) Ռուսաստանը
- 4) Ղազախստանը

42 Թուրքիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչությունը բնութագրվում է բարձր բնական աճով:
- 2) Բնակչության թվով երկրորդ ազգը քրդերն են:
- 3) Բնակչության գերակշիռ մասը դավանում է մահմեդականության սուննի ուղղությունը:
- 4) Թուրքերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական լեզվախմբին:

43 Ո՞ր շարքում տրված լեռնագագաթներն ունեն հրաբխային ծագում.

- 1) Աոնոս, Ուրծ, Մեծ Քիրս
- 2) Մարութա, Ջիլո, Կապուտջուղ
- 3) Սիփան, Ծղուկ, Սրմանց
- 4) Գոմշասար, Թեժլեռ, Սուկավետ

44 «Լեռնագագաթ – բարձրություն» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Թեժ լեռ – 3895 մ
- 2) Կապուտջուղ – 3550 մ
- 3) Աժդահակ – 3597 մ
- 4) Արագած – 4900 մ

45

Ընտրել միջլեռնային գոգավորությունների անվանումների և դրանց բնութագրերի համապատասխանությունների ճիշտ շարքը.

- | | |
|------------------|--|
| ա. Բասենի դաշտ | 1. Այդտեղ են միախառնվում Արևմտյան և Արևելյան Եփրատ գետերը: |
| բ. Երզնկայի դաշտ | 2. Տարածվում է Արևմտյան Եփրատի ակունքներում՝ 1800–2000 մ բարձրության վրա, հատակը հարթ է, տեղ–տեղ՝ ճահճոտ: |
| գ. Կարնո դաշտ | 3. Տարածվում է Արաքսի վերին հոսանքի ավազանում և ծածկված է բերրի սևահողերով: |
| դ. Խարբերդի դաշտ | 4. Տարածվում է Արևմտյան Եփրատի միջին հոսանքի ավազանում՝ 1200–1400 մ բարձրության վրա և ունի բարձր սեյսմիկություն: |

- 1) ա–3, բ–4, գ–2, դ–1
- 2) ա–1, բ–3, գ–2, դ–4
- 3) ա–3, բ–4, գ–1, դ–2
- 4) ա–1, բ–4, գ–2, դ–3

46

ՀՀ–ի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Տավարաբուծությունը մյուս ճյուղերի համեմատ ավելի համաչափ է տեղաբաշխված:
- 2) Բնորոշ է արոտային անասնապահության զարգացման վերընթաց գոտիական համակարգը:
- 3) Անասնապահության ճյուղային կառուցվածքը ձևավորվել է միայն բնակչության պահանջմունքների և տնտեսական պայմանների ազդեցությամբ:
- 4) Գոյություն ունի արոտավայրերի գերբեռնվածություն և գերարածեցում:

47

ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ալյումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
- 2) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
- 3) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:
- 4) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:

48

Հրազդան և Արարատ քաղաքների օդային ավազանի աղտոտման պատճառներից է.

- 1) գունավոր մետաղաձուլական ձեռնարկությունների արտանետումները
- 2) մեքենաշինական ձեռնարկությունների առկայությունը
- 3) շինանյութերի արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումները
- 4) քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների արտանետումները

49


Լոռու մարզի ո՞ր քաղաքը երկաթուղային կայարան չէ.

- 1) Թումանյան
- 2) Սպիտակ
- 3) Ստեփանավան
- 4) Ալավերդի

50

Ի՞նչն ընդհանուր չէ Տավուշի և Վայոց ձորի մարզերի համար.

- 1) Հարուստ են անտառային ռեսուրսներով:
- 2) Գերիշխում են ծալքաբեկորավոր լեռնաշղթաներն ու միջլեռնային գոգավորությունները:
- 3) Բնակչության մեծ մասն ապրում է գյուղերում:
- 4) Մասնագիտացած են հանքային ջրերի արտադրության մեջ:



51 Ո՞ր գետն է քարտեզում նշված Դ տառով.

- 1) Գետիկ
- 2) Արգիճի
- 3) Մասրիկ
- 4) Գավառագետ

52 Ո՞ր էլեկտրակայանն է քարտեզում նշված Ջ տառով.

- 1) Արզնու
- 2) Արգելի
- 3) Քանաքեռի
- 4) Երևանի

53 Նավթի պաշարներով հարուստ պետություն է.

- 1) Իսլանդիան
- 2) Շվեդիան
- 3) Գերմանիան
- 4) Նորվեգիան

54 Թթվային անձրևների առաջացման պատճառ է(են).

- 1) միջերկրածովյան շրջաններում զբոսաշրջության զարգացումը
- 2) մետաղաձուլական ձեռնարկություններից ծծմբային միացությունների արտանետումները
- 3) մթնոլորտում ածխաթթու գազի առկայությունը
- 4) Հյուսիսային Ամերիկայում պեստիցիդների չարաշահումը

55 Բնական միջավայրի այնպիսի փոփոխությունը, որը հանգեցնում է երկրահամա-
կարգի էկոլոգիական հավասարակշռության խախտմանը և կենդանի օրգանիզմ-
ների, այդ թվում՝ մարդկանց գոյության պայմանների վատթարացմանը, կոչվում է.

- 1) բնօգտագործում
- 2) սահմանային թույլատրելի խտություն
- 3) աղտոտում
- 4) ջերմոցային էֆեկտ

56

Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Խաղաղ օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|----------------------------|----------------------|
| 1. Հյուսիսխաղաղօվկիանոսյան | 5. Գվինեական |
| 2. Գվիանական | 6. Գոլֆստրիմ |
| 3. Կուրո Սիո | 7. Արևելաավստրալական |
| 4. Ասեդի հրվանդանի | 8. Ալյասկայի |

57

Գրել Անտարկտիդայի ափերը ողողող ծովերի համարները.

- | | |
|--------------------|---------------|
| 1. Բարենցի | 5. Ուեդդելի |
| 2. Թասմանի | 6. Ամունդսենի |
| 3. Չուկոտյան | 7. Լապտևների |
| 4. Բելինսսհաուզենի | 8. Ռոսսի |

58

Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել տեկտոնահրաբխային և խառնարանային ծագում ունեցող լճերի համարները.

- | | |
|------------|-------------|
| 1. Օնտարիո | 5. Արմադանի |
| 2. Վանա | 6. Բայկալ |
| 3. Օնեգա | 7. Ռուդոլֆ |
| 4. Սևանա | 8. Նեմրութի |

59

Գրել այն լճերի համարները, որոնք Ասիայում են.

- | | |
|-----------|--------------|
| 1. Մեոյալ | 5. Աթաբասկա |
| 2. Պոոպո | 6. Իսիկ Կուլ |
| 3. Թանա | 7. Օնեգա |
| 4. Ուրմիա | 8. Սևանա |

60

Գրել այն լեզվախմբերի համարները, որոնք չեն մտնում հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ.

- | | |
|---------------|----------------|
| 1. գերմանական | 5. հնդարիական |
| 2. ռոմանական | 6. հայկական |
| 3. սլավոնական | 7. իրանական |
| 4. թյուրքական | 8. քարթվելական |

61 Գրել միագործառութային քաղաքների համարները.

- | | |
|-------------|--------------|
| 1. Ծաղկաձոր | 5. Մեծամոր |
| 2. Հրագոյան | 6. Արմավիր |
| 3. Կապան | 7. Իջևան |
| 4. Քաջարան | 8. Նոր Հաճրն |

62 Հարավային Եվրոպայի տրված պետությունները դասավորել սահմանակից երկրների թվաքանակի աճման կարգով.

1. Անդորրա
2. Իսպանիա
3. Իտալիա
4. Պորտուգալիա

63 ՀՀ տրված գետերի համարները դասավորել ըստ այն քաղաքների, որոնցով հոսում են այդ գետերը. Ապարան, Վայք, Վանաձոր.

1. Քասաղ
2. Արփա
3. Փամբակ

64 Նավթի համաշխարհային հետախուզված պաշարները կազմում են 133 մլրդ տ: Երկրագնդի բնակչության թիվը 7 մլրդ մարդ է: Որքա՞ն է երկրագնդի բնակչության մեկ շնչի հաշվով ռեսուրսապահովվածությունը նավթով:

(65-66) Գետի լայնությունը 8 մ է, միջին խորությունը՝ 50 սմ, ջրի արագությունը՝ 1,5 մ/վ.

65 Որոշել գետի ծախսը:

66 Որոշել գետի հոսքը 1 ժամում:

(67-68) ՀՀ բնակչությունը 3,2 մլն է, մահացության ցուցանիշը՝ 0,6 %, բնական աճը՝ 0,3 %.

67 Որոշել ՀՀ բնակչության տարեկան բացարձակ բնական աճը:

68 Որոշել ՀՀ բնակչության տարեկան բացարձակ մահացությունը:

69

Աշխարհի տրանսպորտի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

1. Ծովային փոխադրումների հիմնական բեռներն են նավթն ու նավթամթերքը, հանքաքարի տարբեր տեսակները, հացահատիկը և անտառանյութը:
2. Բեռնաշրջանառությունը որոշակի ժամանակահատվածում տեղափոխած բեռների քանակի և փոխադրումների միջին հեռավորության հարաբերությունն է:
3. Տրանսպորտի մի քանի տեսակների հաղորդակցության ուղիների ճյուղավորման վայրը կոչվում է տրանսպորտային համակարգ:
4. Տրանսպորտային ցանցի կոնֆիգուրացիան կախված է տարածքի մեծությունից և ուրվագծից, բնական պայմաններից, տնտեսության և բնակչության տեղաբաշխման բնույթից:
5. Համաշխարհային ուղևորափոխադրումների ոլորտում բացարձակ առաջատարը ավտոմոբիլային, իսկ բեռնաշրջանառության ոլորտում՝ ծովային տրանսպորտն է:
6. Առևտրային նավատորմով աշխարհի առաջատար երկրներն են Լիբերիան, Պանաման, Ճապոնիան և Հունաստանը:

70

ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

1. Բուսաբուծության մասնագիտացման ճյուղերն են խաղողագործությունը և պտղաբուծությունը:
2. Անասնապահության արտադրանքի բաժինը զգալիորեն գերակշռում է բուսաբուծության նկատմամբ:
3. Հացահատիկի և կարտոֆիլի մշակությունն ունի տեղական նշանակություն:
4. Գյուղատնտեսական նշանակության հողերից ամենամեծ մակերեսը զբաղեցնում են վարելահողերը:
5. Հողաբարելավման գլխավոր տեսակը քիմիական մեխորացումն է:
6. Կարտոֆիլ աճեցվում է բոլոր բնական գոտիների ցանքատարածություններում: